

Ղեկավարի ուղեցույցի ամփոփում  
բարօրություն վերաբերյալ

## Օգնել Տիրոջ ձևով





*Քարոտության Ծրագրի իրական երկարաժամկետ նպատակը քննվորություն ձևավորելն է Եկեղեցու անդամների մեջ, տվողների և ստացողների մեջ, փրկելով այն լավագույնը, ինչ նրանց մեջ է, և ծաղկացնելով և պտուղ տալով հոգու թաքնված հարստությունը, որն ի վերջո այս Եկեղեցու գոյության առաքելությունը, նպատակն ու պատճառն է:*

Ջ. Ռուբեն Բլարկ Կրտ., ցցի նախագահների հատուկ հավաք, հոկտ. 2, 1936

## Օգնել Տիրոջ ձևով

*Եկեղեցու բարոյության ծրագրի նպատակն է օգնել Եկեղեցու  
անդամներին դառնալ ինքնապահովող, հոգ տանել աղքատների  
և կարիքավորների համար, և ծառայել մյուսներին:*

### Բովանդակություն

Անդամների պատասխանատվությունը . . . . .	1
Ցցի Նախագահի պատասխանատվությունը . . . . .	4
Եպիսկոպոսի պատասխանատվությունը . . . . .	4
Օգնություն տրամադրելու բարոյության հիմնական սկզբունքները . . . . .	5
Աղքատներին օգնելու համար մատչելի Եկեղեցու միջոցները . . . . .	5
Աղքատներին օգնելու համար մատչելի ոչ-Եկեղեցու միջոցները . . . . .	8



Մարկոս ժԲ.41-44

## Անդամների պատասխանատվությունը

Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները պետք է օգնեն անդամներին հասկանալ իրենց պատասխանատվությունները իրենց, ընտանիքի և մյուսների հանդեպ:

### Ապահովել ինքն իրեն և ընտանիքին

Եկեղեցու անդամները պատասխանատու են իրենց հոգևոր և նյութական բարօրության համար: Օրինված լինելով ընտրելու ազատությամբ, նրանք արտոնություն ունեն իրենց ուղին ընտրել, իրենց անձնական խնդիրները լուծել և ձգտել դառնալ ինքնապահովող: Անդամները կատարում են դա Տիրոջ ոգեշնչման ներքո և իրենց ձեռքի աշխատանքով:

### Ինքնապահովման հիմունքներ

Ինքնապահովումը իր և ընտանիքի կենսական կարիքները հոգալու ունակություն, պարտավորվածություն և ջանք է: Ինքնապահովող դառնալով, անդամները նաև կարողանում են ծառայել իրար և միմյանց մասին հոգ տանել:

Երբ Եկեղեցու անդամները կատարում են այն ամենը, ինչ կարող են իրենց ապահովելու համար, սակայն դեռևս չեն կարողանում բավարարել իրենց հիմնական կարիքները, առաջին հերթին նրանք պետք է օգնության խնդրանքով դիմեն իրենց ընտանիքներին: Եթե դա հնարավոր չէ, Եկեղեցին պատրաստ կանգնած է օգնելու համար:

Ստորև էջ 2-ում տրված են այն ոլորտները, որտեղ անդամները պետք է ինքնապահովող դառնան:



**Կրթություն:** Կրթությունը կարող է հարստացնել, ազնվացնել և օգնել հասկանալ, որը երջանիկ կյանք է պարզևուր: Անդամները պետք է ուսումնասիրեն սուրբ գրությունները և այլ լավ գրքեր, բարելավեն իրենց կարողալու, գրելու և մաթեմատիկայի հիմնական ունակությունները, ձեռք բերեն հարմար աշխատանք գտնելու հմտություններ:

**Առողջություն:** Տերը պատվիրել է անդամներին հոգ տանել իրենց մտքի և մարմնի համար: Նրանք պետք է հնազանդվեն Իմաստության Խոսքին, օգտակար սնունդ ընդունեն, կանոնավոր մարզվեն և բավարար չափով քնեն: Նրանք պետք է հեռու մնան իրենց մարմինը և միտքը վնասող նյութերից և գործողություններից, որոնք հակում են առաջացնում: Նրանք պետք է պահեն սանիտարա-հիգիենիկ կանոնները և համապատասխան բժշկական և ատամնաբուժական օգնություն ստանան: Նրանք պետք է նաև ձգտեն լավ հարաբերություններ հաստատել ընտանիքի անդամների և մյուսների հետ:

**Աշխատանք:** Աշխատանքը հիմք է, որի վրա կառուցվում է ինքնապահովումն ու կենսական բարօրությունը: Անդամները պետք է պատրաստվեն և զգուշորեն ընտրեն համապատասխան աշխատանք կամ բիզնես, որը կապահովի իրենց անձնական և իրենց ընտանիքի կարիքները: Նրանք պետք է հմտանան իրենց

աշխատանքում, լինեն ջանասեր և վստահելի, և իրենց աշխատավարձի դիմաց ազնիվ աշխատեն:

**Տնային պահեստ:** Իրենց և իրենց ընտանիքի համար հոգ տանելու համար անդամները պետք է.

- Երեք ամսվա սննդի պաշար հավաքեն, որն իրենց նորմալ սննդակարգի մասն է:
- Խմելու ջրի պաշար ունենան այն դեպքերի համար, եթե մատակարարվող ջուրը աղտոտվի կամ կտրվի:
- Կենսապահովման համար աստիճանաբար սննդի երկարաժամկետ պաշար հավաքեն:

Տես *ախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. Ընտանիքի տնային պահեստ, 3 (Նյութի համար 04008):*

**Ֆինանսներ:** Ֆինանսապես ապահով դառնալու համար անդամները պետք է.

- Տասանորդ և նվիրատվություններ վճարեն:
- Խուսափեն ոչ անհրաժեշտ պարտքից:
- Ապրեն բյուջեի և ծրագրի սահմաններում:
- Աստիճանաբար ֆինանսական պահուստ հավաքեն, կանոնավոր քիչ-քիչ խնայելով:
- Ուսուցանեն ընտանիքի անդամներին ֆինանսների տնօրինման սկզբունքները:

Տես *Նախապատրաստւոյն ամեն անհրաժեշտ բան. Ընտանեկան ֆինանսներ*, 3 (նյութի համար 04007):

**Հոգևոր գործընթաց:** Հոգևոր ուժը կարևոր է անձի կենսական և հավերժական բարօրոյթյան համար: Եկեղեցու անդամները պետք է հավատք գործադրեն Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդէպ, հնազանդվեն Աստծո պատվիրաններին, ամեն օր աղոթեն, ուսումնասիրեն սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների ուսմունքները, հաճախեն Եկեղեցու հավաքներին, և կատարեն Եկեղեցական կոչումներն ու հանձնարարությունները:

### **Հոգ տանել մյուսների համար**

Իր մահկանացու ծառայութեան ժամանակ Փրկիչը քայլեց աղքատների, հիվանդների և շարչարվածների մէջ, սպասավորելով նրանց կարիքները, օրհնելով նրանց բժշկելով և հույս տալով: Նա ուսուցանեց Իր աշակերտներին նույնպէս վարվել: Տառապյալներին օգնելը Հիսուս Քրիստոսի աշակերտներին բնութագրող հիմնական գիծն է (տես Հովհաննէս ԺԳ.35):

Մեր օրերում Տերը կրկին պատվիրել է Իր ժողովրդին հոգ տանել աղքատների և կարիքավորների համար: Նա ասել է. «Ահա, ասում եմ ձեզ, որ ուրք պետք է այցելեք աղքատներին ու կարիքավորներին և սպասավորեք՝ ի սկիզբիս նրանց» (ՎևՈւ 44.6): Եկեղեցու անդամներին քաջալերում ենք գթասիրտ ծառայություն մատուցել կարիքավորներին: Նրանք պետք

է «ջերմեռանդ ներգրավված լինեն բարի գործի մէջ», ծառայելու առանց խնայելու կամ հանձնարարվելու (տես ՎևՈւ 58.26–27):

Տերը նկարագրել է աղքատների և կարիքավորների համար հոգ տանելու Իր եղանակը: Նա հրահանգել է Սրբերին. «Ձեր ստացվածքից բաժին հանեք աղքատներին . . . և [դա] պիտի դրվի իմ եպիսկոպոսի առաջ . . . [և] պիտի պահվի իմ շտեմարանում, աղքատին ու կարիքավորին սատարելու համար» (ՎևՈւ 42.31, 34):

Հետագայում Տերը բացատրել է, որ այդ նվիրատվությունները պետք է ներառեն անդամների տաղանդները ևս: Այդ տաղանդները պետք է «գցվեն Տիրոջ շտեմարանը, . . . ամեն մարդ փնտրելով իր մերձավորի շահը, և բոլոր բաներն անելով պարզ աչքով ուղղված Աստծո փառքին» (ՎևՈւ 82.18–19):

Տիրոջ պահեստը չի սահմանափակվում այն շենքով, որտեղից մտնող է մատակարարվում աղքատներին: Այն ներառում է ժամանակ, տաղանդներ, կարեկցանք, նյութեր և ֆինանսական միջոցներ, որ հավատարիմ անդամները մատուցում են եպիսկոպոսին աղքատների և կարիքավորների համար հոգ տանելու նպատակով: Յուրաքանչյուր ծխում գոյություն ունի Տիրոջ պահեստ: Եպիսկոպոսը Տիրոջ պահեստի գործակալն է:

---

### **Յգի Նախագահի պատասխանատվությունը**

Յգի նախագահը հավաստիանում է, որ եպիսկոպոսները

հասկանում են բարօրության սկզբունքները և կատարում են իրենց աստվածային պարտականությունը, գտնելով և հոգ տանելով աղքատների համար: Ցցի նախագահը խորհուրդ է տալիս եպիսկոպոսներին և վերահսկում ծոմապահության նվիրատվություններն ու ծախսերը:

Ցցի նախագահությանը կարող է հանձնարարվել քահանայության ղեկավարությանը պատրաստել բարօրության աշխատանքին, ինչպիսին է եպիսկոպոսի պահեստը կամ աշխատանքով ապահովելու կենտրոնը:

Ցցի նախագահը հաճախում է համակարգող խորհրդի հավաքներին՝ հրահանգներ ստանալու Եկեղեցու տարբեր գործերի, ներառյալ բարօրության սկզբունքների և պարտականությունների վերաբերյալ: Այդ ժողովների ժամանակ,


ղեկավարները ուղիներ են մշակում, ինչպես խթանել ինքնապահովումը, կարիքավորների մասին հոգատարությունը, և քաջալերում են ծոմի նվիրատվությունները:

Ցցի նախագահները նաև համակարգում են բազմացից բարօրության և արտակարգ իրավիճակներին արձագանքելու ջանքերը:

---

## **Եպիսկոպոսի պատասխանատվությունը**

Եպիսկոպոսը աղքատներին գտնելու և նրանց համար հոգ տանելու աստվածային պարտականություն ունի (տես ՎևՈւ 84.112): Նա է ղեկավարում ծխի բարօրության աշխատանքը: Նրա նպատակն է օգնել անդամներին՝ օգնել իրենց և ինքնաապահովող դառնալ:



*Եպիսկոպոսը հանդիպում է կարիքավոր անդամների հետ և քննում, թե ինչպիսի օգնություն կարող է տրամադրել և օգնել նրանց՝ օգնելու իրենց:*

(ճյուղերում, ճյուղի նախագահը ունի այս նույն բարօրության պատասխանատվությունները:)

Եպիսկոպոսները օրինված են խորաթափանցության պարզևուրված և հասկանալի են, թե ինչպես պետք է օգնել կարիքավորներին: Յուրաքանչյուրի անձնական պայմանները տարբեր են և ոգեշնչում է անհրաժեշտ: Առաջնորդվելով Հոգով և այս բաժնում տրված բարօրության սկզբունքներով, եպիսկոպոսը որոշում է, թե ում պետք է օգնել, որքան տալ և որքան ժամանակ օգնել:

Հիմնականում եպիսկոպոսը օգնում է միայն այն անդամներին, ովքեր ապրում են իր ծխի սահմաններում: Հազվադեպ, եպիսկոպոսը Հոգու ոգեշնչմամբ կարող է օգնել անհատներին, ովքեր Եկեղեցու անդամ չեն:

Եպիսկոպոսը գաղտնի է պահում անդամների կարիքները: Նա կիսվում է միայն տեղեկությամբ, որը անհրաժեշտ է քահանայության ղեկավարներին, Սփոփող Միության ղեկավարներին կամ նրանց, ովքեր տրամադրում են օգնությունը:

Եպիսկոպոսները, որոնք կասկածներ ունեն բարօրության ծրագրի հետ կապված չարաշահման կամ խաբեության վերաբերյալ, կարող են զանգահարել եպիսկոպոսների օգնության գիծ (1-801-240-7887) կամ տարածքային գրասենյակ: Եթե եպիսկոպոսը չի ճանաչում անդամին, նա պետք է կապվի անդամի նախկին եպիսկոպոսի հետ նախքան բարօրության օգնություն տրամադրելը:

---

## **Օգնություն տրամադրելու բարօրության հիմնական սկզբունքները**

Եպիսկոպոսը պետք է առաջնորդվի բարօրության հետևյալ հիմնական սկզբունքներով, երբ նա հոգ է տանում աղքատների և կարիքավորների համար.

- **Գտեք աղքատներին:** Բավական չէ աջակցել միայն, երբ խնդրում են: Եպիսկոպոսը պետք է խրախուսի քահանայության և Սփոփող Միության ղեկավարներին, տնային ուսուցիչներին և այցելող ուսուցիչներին գտնել օգնության կարիք ունեցող անդամներին:
- **Բարձրացրեք անձնական պատասխանատվությունը:** Եպիսկոպոսը անդամների հետ միասին վերանայում է, թե ինչ միջոցներ և ջանքեր կարող են նրանք և իրենց ընտանիքը տրամադրել իրենց կարիքները հոգալու համար:
- **Պահպանեք կյանքը, ոչ թե ապրելակերպը:** Եպիսկոպոսը տրամադրում է գոյություն պահպանող անհրաժեշտություններ: Նա օգնություն չի տրամադրում ճոխ ապրելակերպ վարելու համար:
- **Նախքան գումար տրամադրելը ապրանքներով օգնեք:** Հնարավորության դեպքում, եպիսկոպոսը անդամներին ապրանքներ է տրամադրում գումարի կամ նրանց մոծումները կատարելու փոխարեն: Որտեղ եպիսկոպոսների պահեստներ չկան,



*Եպիսկոպոսի ղեկավարության ներքո, ծխի խորհուրդը  
օգնում է լուծել բարօրության կարիքները:*

ծոմապահության նվիրատվությունները կարելի է օգտագործել անհրաժեշտ ապրանքներ գնելու համար:

- **Աշխատելու հնարավորություն ստեղծել:** Եպիսկոպոսները օգնություն ստացողներին խնդրում են աշխատել իրենց հնարավորության չափով իրենց ստացած օգնության դիմաց: Եպիսկոպոսները ուսուցանում են աշխատանքի կարևորությունը և տալիս իմաստալից հանձնարարություններ: Ծխի խորհուրդը հավաքում և պահում է իմաստալից աշխատանքային հնարավորությունների ցուցակ:

---

## **Եկեղեցու միջոցները մատչելի են աղքատներին օգնելու համար**

### **Ծխի խորհուրդ**

Ծխի խորհրդի անդամները, հատկապես քահանայության քվորումները և Սփոփող Միությունը, օգնում են եպիսկոպոսին բավարարել անդամների բարօրության կարիքները: Այս ղեկավարներին օգնում են տնային ուսուցիչները, այցելող ուսուցիչները և նրանք, ովքեր հատուկ հմտություններ ունեն:

Անհրաժեշտության դեպքում գաղտնի հարցեր կարելի է քննարկել քահանայության գործադիր հանձնախմբի ժողովին հրավիրված Սփոփող Միության նախագահության հետ:



*Երբ հարմար է, եպիսկոպոսը հանձնարարում է ծխի Սփոփող Միության նախագահին այցելել անդամներին, գնահատել նրանց կարիքները և օգնել որոշել, թե ինչպիսի օգնություն պետք է հատկացնել:*

### **Քահանայության Բվորումներ և Սփոփող Միություն**

Բարօրությունը կարևոր է քահանայության քվորումների և Սփոփող Միության դերի համար: Այդ մասին մշտապես պետք է քննարկել նախագահության ժողովներում: Եպիսկոպոսի ղեկավարության ներքո, քահանայության քվորումները և Սփոփող Միությունը օգնում են անդամներին լուծումներ գտնել բարօրության կարիքների և ինքնապահովման հարցում:

### **Սփոփող Միության Նախագահ**

Նախորդ պարբերություններում նկարագրված նրա բարօրության պարտականություններից բացի Սփոփող Միության նախագահը հիմնականում օգնում է եպիսկոպոսին այցելելով անդամներին, ովքեր օգնության կարիք ունեն: Նա օգնում է նրանց գնահատել իրենց կարիքները և հուշում է

եպիսկոպոսին, թե ինչպիսի օգնություն պետք է տրամադրել: Նրանց օգնելու համար եպիսկոպոսը և Սփոփող Միության նախագահը կարող են օգտագործել Կարիքների և Միջոցների վերլուծությունն ձևը (հմ. 32290 201):

### **Ծխի բարօրության մասնագետներ**

Եպիսկոպոսությունը կարող է գանգահարել աշխատանքի գծով մասնագետին և բարօրության այլ մասնագետներին: Այդ մասնագետները պետք է լինեն ծխի անդամներ, ովքեր օգնում են ծխի այլ անդամներին այնպիսի հարցերում, ինչպիսին են աշխատանքի տեղավորումը, կրթությունը և վերապատրաստումը, սնունդը և հիգիենան, Մշտական Կրթական Հիմնադրամը, առողջապահությունը, ընտանեկան ֆինանսները և բարօրության այլ կարիքներ:

## **Ծումի նվիրատվություններ և տասանորդ**

Տերն Իր ժողովրդին օրհնելու համար հաստատել է տասանորդի օրենքը և ծումի օրենքը, որն ընդգրկում է ծումի նվիրատվությունները (տես Եսայիա ԾԸ.6–12; Մաղաքիա Գ.8–12): Ծումի նվիրատվությունները օգտագործվում են բացառապես բարօրության կարիքները հոգալու համար:

Եպիսկոպոսը ծխի խորհրդի աջակցությամբ ուսուցանում է բոլոր անդամներին այդ օրենքներով ապրելու կարևորությունը: Նա նաև ուսուցանում է Տիրոջ խոստումների մասին, որոնք տրվել են այդ օրենքներով ապրողներին: Այդ խոստումներից են Տիրոջը մոտ զգալը և ուրիշների հանդեպ ավելի շատ կարեկցանք տածելը: Տերը նաև խոստանում է ավելի մեծ հոգևոր ուժ, բարելավված նյութական վիճակ և ծառայելու ավելի մեծ ցանկություն:

Աշխարհի որոշ տարածքներում, եպիսկոպոսների պահեստներ են մատչելի սնունդ և հագուստ տրամադրելու համար: Որտեղ եպիսկոպոսների պահեստներ գոյություն չունեն, ծումի նվիրատվությունները օգտագործվում են սննդով և հագուստով ապահովելու համար: Այն օգտագործվում է նաև ապաստան, բժշկական օգնություն և կյանքի համար այլ անհրաժեշտ օգնություն տրամադրելու համար:

Եկեղեցու Բարօրության Գերագույն Խորհուրդը հաստատել է այն առավելագույն գումարը, որ

եպիսկոպոսը կարող է վճարել կարիքավոր անդամների բժշկական ծախսերի համար, որը չի պահանջում հավելյալ հաստատում: Երբ ծումի նվիրատվություններն են օգտագործվում, բժշկական օգնություն պետք է ստանալ մոտակա բուժիմանարկում:

Պարտադիր չէ, որ ծումի նվիրատվությունների ծախսերը հավասարակշռեն ծումի նվիրատվության ավանդներին:

Բարօրության օգնությունը Եկեղեցու անդամների համար է, և հիմնականում ֆինանսավորվում է ծումի նվիրատվությունների ավանդներով: Եկեղեցու մարդասիրական օգնությունը բոլոր հավատների մարդկանց համար է, և հիմնականում ֆինանսավորվում է մարդասիրական նվիրատվություններով:

## **Ցցի և Եկեղեցու այլ միջոցները**

Եպիսկոպոսը կարող է զանգահարել ցցի մասնագետներին, Եկեղեցու աշխատանքի տեղավորման կենտրոններ, եպիսկոպոսների պահեստներ, Դեզերեթ Ինդապթրիս և ՎՕՍ Ընտանեկան Ծառայություններ, կարիքավոր անդամներին օգնելու համար, եթե նման միջոցները մատչելի են:

---

## **Ոչ-Եկեղեցու միջոցները մատչելի են աղքատներին օգնելու համար**

Անդամները կարող են օգտագործել միջոցները համայնքում, ներառյալ պետական միջոցները,

իրենց հիմնական կարիքները հոգալու համար: Եպիսկոպոսը պետք է ծանոթանա այդ միջոցներին: Դրանք կարող են ներառել.

- Հիվանդանոցներ, բժիշկներ կամ առողջապահական այլ միջոցներ:
- Աշխատանքի վերապատրաստման և տեղավորման ծառայություններ:
- Հաշմանդամների համար հատկացվող օգնություն:

- Մասնագետ խորհրդատուներ կամ սոցիալական աշխատողներ:
- Հակումներ բժշկելու ծառայություններ:

Անգամ երբ Եկեղեցու անդամները օգնություն են ստանում ոչ-Եկեղեցական ծառայություններից, եպիսկոպոսը պետք է օգնի նրանց, որպեսզի նրանք կախվածության մեջ չընկնեն այդ ծառայություններից:





## Մատթեոս ԻԵ.35–36, 40

Կազմ. Քրիստոսը բժշկում է հիվանդին *Բեթեզդայում*, Կառլ Հենրիխ Բլոխի, տրամադել Է Բրիգամ Յանգ Համալսարանի պատկերասրահի Կազմի առջևի էջը. *Քրիստոսը և հարուստ երիտասարդ կտավարիչը*, Հենրիխ Հոֆմանի, տրամադել Է C. Harrison Conroy Co., Inc-ը: Առջևի էջ 1. *Սյուր լուանս*, Ալեքսանդր Բայրա: էջ 1. Լուսանկարը © Robert Casey Կազմի նախալեռջին էջ. *Ամբողջ քաղաքը հավաքվել էր մեկտեղ*, Ջեյմս Տիտ

© 2008 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները պաշտպանված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում Անգլերենի հաստատումը. 12/08: Թարգմանության հաստատումը. 8/08: *Providing in the Lord's Way: Summary of a Leader's Guide to Welfare* -ի թարգմանությունը: Armenian. 08257 201 Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի եկեղեցու կողմից: Սույլ Լեյք Սիթի, Յուտա

*Մեզ համար որպես առաջնային նպատակ է հանդիսացել  
հաստատել . . . մի համակարգ, որի ներքո ծուլության անեծքը կվերանա,  
նյութական նպաստի չարիքը կհեռանա, և անկախությունը,  
աշխատասիրությունը, տնտեսվարությունը և արժանապատվությունը  
կրկին կհաստատվեն մեր ժողովրդի մեջ: Եկեղեցու նպատակն է  
օգնել մարդկանց օգնել իրենց: Աշխատանքը պետք է կրկին  
դառնա գերիշխող սկզբունք մեր Եկեղեցու անդամների կյանքում:*

Առաջին Նախագահություն, Համաժողովի ելույթ, հոկտ. 1936, 3

ՀԻՍՈՒՍ  
ՔՐԻՍՏՈՍԻ  
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ  
ԵԿԵՂԵՑԻ

